Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-140-08.11.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի թիվ ՀՕ-137-Ն օրենքի 2.1-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ին:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ կառավարություն	Արդարադատություն իրականացնող դատավորների կենսաթոշակի հետ կապված նախատեսել այնպիսի կանոնակարգումներ, ինչպիսիք նախատեսված են սահմանադրական դատարանի անդամների համար: Միաժամանակ՝ նախատեսել անցումային դրույթներ, որոնցով կկարգավորվի նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից սեղմ ժամկետում որակավորման ստուգումներ անցկացնելու և դրա արդյունքում ընտրված թեկնածուների համար համապատասխան դասընթացներ կազմակերպելու հարցը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	2013 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտնում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը: Ըստ այդմ, ընդհանուր իրավասության դատարանի դատավորի դրույքաչափը նախատեսվում է սահմանել 478405 դրամ (440000-ի փոխարեն): Դրույքաչափը բարձրացնելով պայմանավորված կենսաթոշակների չափերի մեխանիկական աճ թույլ չտալու նպատակով, առաջարկվում է. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1) 2-րդ հոդվածի 2-րդ մասում «100» թիվը փոխարինել «92» թվով,	1) Ընդունվել է.	1) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	2) 2-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Միջին աշխատավարձը հաշվարկելու, կենսաթոշակի չափը հաշվարկելու, նշանակելու, վճարելու, կենսաթոշակի չափը վերահաշվարկելու, ստաժը հաշվարկելու կարգը, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Միջին աշխատավարձը հաշվարկելիս՝ դատավորի աշխատավարձից հաշվարկված հարկերը հաշվի չեն առնվում:»,	2) Ընդունվել է.	2) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	3) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ին: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատավորին նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի փոխարեն նշանակվում է Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կենսաթոշակ: Եթե Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված (նշանակված) կենսաթոշակի չափը ցածր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի հանրագումարի չափից, ապա Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված (նշանակված) կենսաթոշակը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի հանրագումարի չափով:»:	3) Ընդունվել է.	3) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: